ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0014, ք. Երևան, Հ.Ներսիսյան 10; հեռ. (0037410) 24-08-31; civ.yerevan@court.am

N ԴԴ Ա-8.2 Ե-32514/25
«26» մայիսի 2025թ.

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գալստյան,

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 2025 թվականի պահպանման ծախսերի 4214 «Կապի ծառայություններ» հոդվածով, ըստ «Հայփոստ»ՓԲԸ-ի հետ 19.02.2025թ. կնքված թիվ PDU-121-01-25 պայմանագրի և 26.05.2025թ. լրացուցիչ թիվ 1 համաձայնագրի՝ մատուցվել է փոստային ծառայություններ: Ուստի խնդրում եմ Ձեր միջնորդությունը՝ վերոնշյալ ծառայությունների համար, 125 524 700ՀՀ դրամ գումարի չափով տրված դրական եզրակացությունից նվազեցնել 34 000 000 ՀՀ դրամ:

Գրությանը կցվում է «Հայփոստ» ՓԲԸ-ի և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից կնքված թիվ 1 լրացուցիչ համաձայնագիրի պատճենը:

Առդիր՝ « 1 » թերթ:

ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Լրացուցիչ համաձայնագիր թիվ 1

19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-121-01-25
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան **26.05.2025թ.**

«ՀԱՅՓՈՍ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0002, Սարյան 22 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ Լիազորություններ վերապահելու մասին 03.10.2023թ.-ի թիվ 2467-Ա հրամանով, և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Վարդան Վարդանյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-121-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 125 524 700 (մեկ հարյուր քսանհինգ միլիոն հինգ հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել է 91 524 700 (իննսունմեկ միլիոն հինգ հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 19.02.2025թ.-ին կնքված թիվ PDU-121-01-25 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

Ընկերություն՝

«Հայփոստ» ՓԲԸ
ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5
ՀՎՀՀ՝ 02507464
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930003703156000
Հեռ.՝ (010) 544-444

Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար՝

Գուրգեն Բաղդասարյան ----------
/ստորագրություն/

Պատվիրատու՝

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի աշխատակազմ
ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան 10
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011045318
Հեռ.՝ (010) 200-031

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝

Վարդան Վարդանյան ----------
/ստորագրություն/